ԿԱՐԾԻՔ
(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Տիգրան Արմանի Մուղնեցյանի «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Տիգրան Մուղնեցյանի «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսական աշխատանքը արդիական և կարևոր ուսումնասիրություն է: Ընտրությունների ինստիտուտն առանցքային և էական բաղադրիչ է ցանկացած ժողովրդավարական հասարակության համար, որով արտահայտվում և ներկայացվում են հանրության տրամադրություններն ու նախընտրությունները: Ընտրությունների ինստիտուտը ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցնում ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրներում: Ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրներում սակայն ընտրությունների ինստիտուտի կայացմանը և գործառնականությանը ներհատուկ են որոշակի առանձնահատկություններ: Ընտրված թեմայի կարևորությունը ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ Տ. Մուղնեցյանը ընտրել և համեմատական վերլուծություն է իրականացրել հետխորհրդային ժողովրդավարցվող երկրների ընտրական համակարգերի միջև:

Ատենախոսական աշխատանքում հստակ սահմանված է հետազոտական նպատակը, նպատակին համապատասխան սահմանված և պատշաճորեն լուծված են երեք հետազոտական խնդիրները: Հեղինակը սահմանված նպատակի և խնդիրները լուծելու ճանապարհին իր հետազոտական աշխատանքում հաջողությամբ կիրառում է որակական և քանակական մեթոդներ: Մասնավորապես չորս հետխորհրդային

երկրների՝ Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի, ամբողջական ընտրական տվյալների քանակական վերլուծության արդյունքում Տ. Մուղնեցյանը հաշվարկում է ընտրական համակարգերը բնորոշող երկու կարևոր ցուցանիշ՝ խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թիվը և անհամամասնականության ցուցանիշը: Հիմնվելով վերոնշյալ քանակական ցուցանիշների, ինչպես նաև առանձին երկրների ընտրական համակարգերի որակական ուսումնասիրության (*case study*) վրա հեղինակը կառուցում է համեմատակը այդ երկրների միջև:

Վերոնշյալի առկայությամբ արտացոլված է աշխատության գիտական նորույթը: Ինչը արտահայտվում է թե ընտրությունների ինստիտուտի ուսումնասիրման քանակական մոդելների զգալի կիրառմամբ, որն ընտրական համակարգերի հայրենական հետազոտությունների համար նորամուծություն է, թե ընտրված երկրների շրջանակի ընտրական ամբողջական տվյալների վերլուծությամբ: Այդ կերպ աշխատանքը տվյալային հարուստ բազա կարող է հանդիսանալ գիտակարգում հետխորհրդային երկրների ընտրական համակարգերի հետագա հետազոտությունների համար: Բացի դրանից ուսումնասիրությունը կարող է օգտագործվել ինստիտուցիոնալ միջավայրի՝ կուսակցական և ընտրական համակարգերի, բարեփոխումները առավել նպատակային դարձնելու և այդ բարեփոխումները գնահատելու իմաստով: Ողջունելի է նաև հեղինակի կողմից իրականացրած հետազոտությանը վերաբերվող գրականության համապարփակ և ամբողջական ուսումնասիրությունը, աշխատանքն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք:

Ատենախոսության առաջին՝ «**Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը**» գլխում հեղինակը նախևառաջ քննարկում և ներկայացնում է ընտրությունների ինստիտուտի տերը ժողովրդավարության տարբեր տեսամեթոդական մոտեցումներում: Դասակարգելով ժողովրդավարության մոտեցումներն ըստ ընտրությունների ինստիտուտի դերի, հեղինակը նույն գլխում անդրադառնում է ընտրությունների ինստիտուտի դերին ժողովրդավարացման, վարչակարգերի փոփոխության գործընթացներում: Առաջինը գլուխը եզրափակող ենթագլխում հեղինակը ներկայացնում է ընտրական համակարգի բնույթը, դրա

առաջնային և երկրորդական բաղկացուցիչներն ու հատկանիշները, ինչպես նաև ներկայացվում է խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ու անհամամասնականության ցուցանիշի հասկացությունները, քննարկվում է դրանց հաշվարկի տարբեր ընդունված մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հետխորհրդային ժողովրդավարացվող երկրներում ընտրական համակարգի համեմատական վերլուծություն»** գլխում հեղինակը նախ սահմանում է էմպիրիկ հետազոտությանը ենթակա երկրների ընտրման չափանիշները, օպերացիոնալիզացիայի է ենթարկում առաջին գլխում ներկայացված հասկացությունները: Այնուհետև այդ չափանիշների համաձայն կատարում է առանձին երկրների ընտրական համակարգերի, գործընթացների վերլուծություն՝ ներկայացնելով ընտրությունների ինստիտուտի զարգացումը, ինստիտուցիոնալ միջավայրը, ընտրական գործընթացը և վարչակարգերի տրանսֆորմացիան: Առանձին երկրների ուսումնասիրությունից հետո, գլխի վերջին ենթագլխում ներկայացվում է երկրների ընտրական համակարգերի համեմատական վերլուծությունը, որտեղ արձանագրվում են ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

Ատենախոսական աշխատանքի հետևություններն ու եզրակացությունները փաստարկված են, շարադրված են տրամաբանական հետևողականությամբ և հիմնավորվածությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հրատարակած հոդվածներում:

Տիգրան Մուղնեցյանի պաշտպանության ներկայացված աշխատանքը, սակայն զերծ չէ որոշակի բացթողումներից, որոնք ներկայացված են ստորև՝

1. Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում հեղինակը մանրամասն ներկայացնում է կուսակցությունների արդյունավետ թվի և անհամամասնականության ցուցանիշի կոնցեպտները, հաշվարկների տարբերվող մոտեցումները, դրանց առավելություններով և թերություններով: Վերոնշյալին զուգահեռ ենթագլխում հեղինակը մանրամասն քննարկում է կուսակցական համակարգի

փոփոխականության ցուցանիշը, ընդգծելով դրա կարևորությունը: Սակայն ատենախոսության երկրորդ գլխում՝ էմպիրիկ հետազոտության հատվածում կուսակցական համակարգի փոփոխականության ցուցանիշը հաշվարկված չէ: Ճիշտ է հեղինակը հիմնավորում է չկիրառումը և աշխատանքում ցուցանիշի միայն նկարագրությունով բավարարվելը այն հանգամանքով, որ կուսակցական համակարգի փոփոխականության ցուցանիշը «արտահայտում է կուսակցական համակարգի առանձնահատկությունները»: Սակայն կարծում ենք, որ կուսակցական համակարգի փոփոխականության ցուցանիշի դիտարկումն առանձին երկրների ընտրական համակարգերի համատեքստում կնպաստեր ընտրությունների ինստիտուտի և ընտրական համակարգի, դրա բաղադրիչների և հատկանիշների առավել ընդարձակ մեկնաբանմանը:

2. Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում և երկրորդ գլխի առաջին ենթագլխում հեղինակը ներկայացնում է ժողովրդավարության չափման մի շարք հեղինակավոր գործիքակազմեր: Սակայն դրանցից երկրների ուսումնասիրման ժամանակ կիրառում և մանրամասն անդրադառնում է միայն «Freedom House» - ի ժողովրդավարության չափմանը: Եթե «Polity» պրոյեկտի համար հեղինակը նշում է դրա թերությունները և հետազոտության շրջանակում կիրառության ոչ արդյունավետ լինելը, ապա մնացած՝ «EIU»-ի և «V-dem»-ի դեպքերում հիմնավորումները բացակայում են: Աշխատանքը կշահեր եթե անդրադարձ կատարվեր վերոնշյալ չափումների առավելություններին ու թերություններին: Ինչպես նաև հիմնավորվեր չափումների չկիրառելու որոշումը կամ չկիրառելու դեպքում առհասարակ անդրադարձ չկատարվեր այդ չափումներին:

3. Աշխատանքում հեղինակը մանրամասն և ակադեմիական պահանջների համաձայն, այլ քանակական տվյալներին զուգահեռ, հաշվարկում և ներկայացնում է խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշը: Սակայն բացի խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշից

առկա է մասնակից կուսակցությունների արդյունավետ թիվը, ինչին հեղինակը անդրադառնում է աշխատանքի առաջին՝ տեսական գլխում: Հեղինակը նաև առանձնին երկրների ընտրական համակարգերի հետազոտման շրջանակում, իր հաշվարկներում և աղյուսակներում ներկայացնում է ընտրական գործընթացին մասնակից կուսակցությունների թիվը: Այդուհանդերձ, հեղինակը առանձին երկրների իր քանակական վերլուծությունում չի ներառել մասնակից կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշը: Կարծում ենք, որ այդ ցուցանիշի հաշվարկի դեպքում աշխատանքը կշահեր:

Ամփոփելով, պետք է նշել, որ վերոշարադրյալ մասնակի թերությունները ամենևին չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Տիգրան Արմանի Մուղնեցյանի «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է գիտությունների թեկնածու գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Քաղաքական գիտությունների թեկնածու,
Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ Արսեն Ղազարյան

Քաղաքական գիտությունների թեկնածու՝ Ա. Ղազարյանի ստորագրությունը հաստատում եմ Միգրացիոն ծառայության ընդհանուր բաժնի պետ Սեդա Հարությունյան

13.02.2023թ.